ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

ք. Երևան

Կոդ: ՈՐԽ0102 – N 04/07 L
Դաս: ՀՊ
«26» ապրիլի 2018թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով "Բաժնետիրական ընկերությունների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 84-ի 1-ին մասի բ)-ից ե), ժգ) կետերը, "Բանկերի և բանկային գործունեության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21^{6}-ի 1-ին մասի բ), ը), թ) կետերը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 12.1. կետի բ), ը), թ), ժէ) ենթակետերը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2018 թվականի տարեկան ընդհանուր ժողովը հրավիրել 2018 թվականի հունիսի 15-ին ժամը 12^{00}-ին՝ ք.Երևան, Պարոնյան 21/1 հասցեում գտնվող ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Զարգացում մասնաճյուղում:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2018 թվականի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օր սահմանել 2018 թվականի մայիսի 04-ը:
3. Նախնական հաստատել և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2017 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն Հավելված 1-ի:
4. Բանկի տարեկան ընդհանուր ժողովին ներկայացնել շահույթի բաշխման առաջարկություն՝ համաձայն Հավելված 2-ի:
5. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2018 թվականի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը՝ համաձայն Հավելված 3-ի:

6. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2018 թվականի տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու մասին բաժնետերերին ծանուցել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով:

7. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցանկը՝ համաձայն Հավելված 4-ի:

8. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տեղեկացնել, որ սույն որոշման 7-րդ կետով հաստատված ցանկում ընդգրկված նյութերին կարող են ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք.Երևան, Պուշկինի 19), ինչպես նաև համացանցի Բանկի տնային էջում (www.araratbank.am):

9. Հաստատել օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկի ձևը՝ համաձայն Հավելված 5-ի:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ **Բ. Բեգլարյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ԲԱՑ ԿԻՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО ARARATBANK OPEN JOINT STOCK COMPANY YEREVAN 02500518 ARARATBANK ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Հավելված 2